

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկա 12... 30.
Վեցամսեայ 6

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան ... 14 ծր.


Վեցամսեայ ... 7

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50

ԿԱՆԽԻԿ

Մանուկանս տողը
20 տանքիւ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱՐԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՅԻ

Redaction du journal
"Levouni"
VARNA (Bulgarie)
Редакция
на ВѢСТНИКЪ
Иправникъ
ВАРНА
Գրութիւնք եւ լին
տրութիւն

Redaction du journal

"Levouni"

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иправникъ

ВАРНА

Գրութիւնք եւ լին
տրութիւն

ՊՈԼԿԱՐԻԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ

Ընդունած եւ աներհեքելի ճշմարտութիւնն է թէ երկրի մը տիրող կամ պաշտօնական լեզուն այդ երկրի բնակիչներուն համար — ասոնք որ ազգի կամ տոհմի ալ պատկանին — հացի լեզունն է, զոր պէտքէ ամէն ոք գիտնայ իր գործին, իր առեւտուրին, իր արհեստին եւ վերջապէս իր ընտրած ասպարէզին մէջ գիւրութեամբ, առանց խոչնդոտի յառաջանալու եւ իր ապրուստը ու գիրքը ապահովելու համար։ Թէեւ այդ պաշտօնական տիրող լեզուն ըլլայ ազգային, ըլլայ անկանոն եւ բարոյական կամ մտաւորական ոչ մէկ առաւելութիւն չընծայող, կրկին այն պէտք է այն բոլոր անհատներուն որոնք իրենց կիսանքը կամ կեանքին մէկ մասը պարտաւորուած են այդ երկրի մէջ անցընել։

Ահա ճիշդ այս պատճառաւ, Պուլկարիայ մէջ բնակող ամէն հայ, ըլլայ տեղացի ու գաղթական, պատանի կամ երիտասարդ, պէտք ունի, նոյն իսկ իր շահուն, իր ապրուստին համար, քիչ թէ շատ սորվելու պուլկար լեզուն. այս պէտքը ցարդ նուազ չգալի էր բայց ասկէ անդին օր քան զօր անհրաժեշտ կը դառնայ. արդէն դպրոցական պատանիներու համար պարտաւորիչ եղած է պուլկարերէնի ուսումը։

Լեզու մը գիւրութեամբ եւ հիմնապէս սորվելու համար, բացատրել հարկ չէ, թէ գիւրութեան գիրքեր եւ մեքոտներ հարկաւոր են, ինչ որ ցարդ կը պակսէր մեր մէջ Պուլկարերէնի համար։ Սակայն այսօր ուրախ ենք աւելտելու մեր պուլկարահայ ընթերցողներուն թէ այդ պակասին առաջինը եւ կարեւորը կը լեցուի Տ. Ասատուր Մկրտիչեանի հրատարակած «Պուլկարերէն—Հայերէն—Տաճկերէն» ԲԱՅԻՆԱՆՈՒԹԻՒՆԻ։ Այս Բառարանը հակառակ իր գիւրամատչելի գնոյն (5 ֆր. մեր մէջ այդ ծաւալով ասկէ աման

բառարան չէ կարելի ունենալ) բաւական է գոհացնելու թէ՛ դպրոցականը, թէ՛ առեւտրականը, թէ՛ զարգացածը եւ թէ՛ անգրագացեալը. մանաւանդ Բառարանին առաջին մասը կազմող քերականական կարեւոր գիտելիքներու եւ կանոններու ամփոփումը — 40 երեսի չափ — մեծ գիւրութիւն կը նմայէ պուլկարերէնի բոլորովին անտեղեակ անհատներու իսկ. նաեւ մէն մի բառի առջեւ հայերէնէ զատ գրուած թարգմանները աւելի գիւրըմբռնելի ու հասկանալի կը նեն բառերը եւ ոճերը նոյն իսկ հայերէն չի գիտցող թրքախոս ազգայնոց համար։

Ճշմարիտը խօսելով, մեծ շնորհութիւն մըն է որ ըրած է յարգոյ հեղինակը ինքիւնք ծանր աշխատութեան մը Կ. քանի մը հազար ֆր. ծախքի ենթարկելով յիշխական մեծ առաւելութիւնով չը փայլող անձի մը ըրած այս զոհողութիւնը, որ կոչուած է Պուլկարիայ մէջ բնակող բոլոր ազգայնոց մեծ ծառայութիւն մը մատուցանելու, հարկ է որ դնահատուի դրականապէս այսինքն հարուստ եւ բարեկեցիկ ազգայինները նոյն իսկ իրենց պէտքին համար՝ ոչ թէ միայն մէյրէկ օրինակ գնելու են, այլ նաեւ անոնք աղքատիկ աշակերտներու ալ մէյմէկ հատ նուէր տալու են անկէ։ Ահա առիթը, Ձատիկը կը հասնի, մէյմէկ Ձատիկական նուէր, եւ ի՞նչ աւելի օգտական քան այս նուէրը։

ՊԱՏՏՈՆԱԿԱՆ ՅՍՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՅԵՂԱՔՈՒԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԵԱՆՉՆԱՌԱՐԱՐՈՒ

Ներկայիւս կուգանք Հայ հասարակութեան յայտարարելու թէ՛ Հայ յեղ. Միութեան Յանձնախումբերը՝ գումարելով իրենց Բ. Պատգ. Ժողովը, տուած են յիշխական կարեւոր սրտշումներ։

Պատգ. Ժողովը, առաջին եւ մասնաւոր ուշադրութեան ու հո-

գածութեան նիւթ ընելով յիշխական կուսակցութիւններու միջեւ կարելի եւ ամբողջ հայ ժողովուրդի միակ բաղձանքն եղող ընդհ. միութեան խնդիրը — որ եղած է եւ է կազմակերպութեան հիմնական եւ անմիջական նպատակներէն մին եւ որուն յաջող լուծումը համարան չէ դադարած իր կարելի միջոցներով աշխատելէ — եկաւ այն եղանակացութեան թէ՛ յիշխական կուսակցութիւններու մէջ այնպիսի միութիւն մը գործնականապէս կարելի է իրագործել՝ հրաւիրելով զանոնք ամէնքն ալ ընդհանուր յիշխական կոնգրէսի մը (Պատգ. Ժողովի) որը մշակէ եւ կազմէ ընդհանուր միակ ծրագիր մը ընդհանուր յիշխական մարմնի մը համար, այսպէսով հայրենիքի ազատութեան գործը, որ տարիներէ ի վեր անտանելի քառի եւ անիշխանութեան մէջ կը տատանի՝ ազատուած պիտի ըլլայ իր այս վիճակէն։

Այս սրտշման համաձայն ողջ Բ. Պատգ. Ժողովի կողմէն պաշտօնական մասնաւոր հրաւիրագրեր կը զրկուին բոլոր հայ յիշխական կուսակցութիւններուն, որոնք հայ ժողովուրդին մէջ ճանչցուած են իրենց Հայաստանի ազատութիւնն իրագործելու նպատակով կազմուած կազմակերպութիւններ։

Կը յուանք թէ հայ ժողովուրդը համակրութեամբ պիտի ընդունի հայ յեղ. միութեան յանձնախումբերու Բ. Պատգ. Ժողովին այս որոշումը եւ ասկէ զատ չպիտի զլանայ ընձեռելու անոր իր բարոյական աջակցութիւնը ժողովի սոյն որոշման յաջող գործադրութեան համար։

Հայ յեղ. Յեղ. Միութեան Յանձնախումբերու կողմէ եւ Բ. Պատգ. Ժողովի որոշումով

Վառնայի Յանձնախումբ
(Կնիք)

Վառնա, 19 Մարտ

Թ. Գ. Մէկ մէկ օրինակ ալ Հայաստանի, Վերածնունդի, Հայն Հայրենեացի, Հայրենիքի եւ Ազատ թեմի զրկուածէ հրատարակելու խնդրանք։

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

Կ. Պոլսոյ Պատրիարքին եւ եպիսկոպոսներուն կողմանէ երկրորդ անգամ ՎԵՏ. Կաթողիկոսին զրկուած գրութիւնը թարգմանաբար կարտադրելու Լ'Առաւելիէ։

Առ Սրբազան Գերաշնորհ Պատրիարք մեր Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթողիկոս ամենայն Հայոց։

Ամենախնարհ յարգանք եւ ակնածանք կը ներկայացնենք հետեւեալը։

Էջմիածնի սրբափայլ, որ Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսչան աստուածային պատգամին համաձայն, սահմանուեցաւ ըլլալ «Տաճար Աստուծոյ եւ քահանայապետարան» մեր ուղղափառ Ս. Եկեղեցւոյ, չը կրցաւ — նախախնամութեան անքննելի մէկ անօրինութեամբ — միշտ զերծ մնալ աշխարհիս փորձաբութիւններէն եւ զբոսարութեանց ծանր բեռէն։ Այս պատճառաւ ժամանակ ժամանակ ստիպուեցաւ ինքնակամար հրաժարիլ իր փառքէն, որով եւ մեր եկեղեցւոյ ծայրագոյն Պատրիարքութեան Աթոռը պարտաւորեցաւ նմանիկ հոն ուր կարելի էր գործունէութեան եւ հաղորդակցութեան աւելի ազատ պայմաններ գտնել։ Բայց փառք Ամենաբարձրելոյն, Լուսաւորչի Ս. Եկեղեցւոյն զաւակները բազմ ունեցան ողջունել Պատրիարքական Աթոռոյ վերադարձը դէպի իր նուիրական որրանք, թէեւ ոչ կատարելապէս զերծ հակառակութիւններէ եւ գոտարութիւններէ։

Եւ մենք, որ մեր ուղղափառ Եկեղեցւոյ սպասաւորութեան կարգեցանք այս վերջին դարուն մէջ, ցարդ այն յոյսով եւ վստահութեամբ կապրինք թէ անյեղի օրէնքները եւ ոռոտական հօգր կառավարութեան կայսերական հրամանները մեր կաթողիկոսական Աթոռը օժտած էին այն ամենով որ անհրաժեշտ է իր ընդհանրական նկարագրոյն եւ իր տիեզերական հովանաւորութեան համար, զանազան երկրներու մէջ ցրուած Հայերու վրայ։

Որովհետեւ այն օրէն որ էջմիածնայ դաւառը Թուսոց տիրապետութեան տակ անցաւ, Վեհափառ Նիքոլա Ա. կայսրը փափաք յայտնեց ճշգրիտ եւ սահմանելու Աթոռին հիմնական իրաւունքները եւ պետութեան հետ ունեցած յարաբերութիւնները։ Եւ յանձնաժողովներ կարգեց խնդիր ուսումնասիրելու համար. ապա Կաթողիկոսին կարծիքն անհեղին յետոյ 1836 մարտի

11ին կազմական եւ օրինական կանոնադրութիւնը մը հաստատեց Ռուսաստանի հայկական եկեղեցւոյ համար :

Իրաւ սակայն որ այդ կանոնադրութիւնը կը պարունակէր այնպիսի զբաղմունքներ , որ եկեղեցւոյն իրաւունքները եւ իշխանութիւնը սեղմուած էին յօգուտ պետութեան , ասկէ զատ մեր աւանդական սովորութեանց հակառակ կէտեր ներմուծուած էին հոն . ահա ստոր համար էր որ երջանկայիշատակ Յովնանէս Բ. կաթողիկոսը եւ անոր յաջորդները համարձակօրէն իրենց դիտողութեանը ըրին այդ մասին , իսկ Հնգկաստանի եւ Թուրքիոյ մէջ ընկող ուղղափառ Հայերը այդ աղթիւ արդարացի բողոք բարձրացուցին :

Բայց որովհետեւ այս կանոնադրութիւնը մը եկեղեցւոյն նպատակը չատ մը բաներ կը պարունակէր , մանաւանդ մեր առաքելական եկեղեցւոյ անկախ իշխանութեան հիմնական սկզբունքները հոն ըստ բաւականի պահպանուած էին եւ մեր կաթողիկոսութիւնը կը պահէր իր կազմակերպութիւնը իսկ իբր զլուծի համօրէն հայկական եկեղեցւոյ ազատ էր իր յարաբերութեանց մէջ այս եկեղեցւոյն հետ . կաթողիկոսական Սթոնը , մեր եկեղեցին եւ անին ուղղափառ Հայերը հաւանեցան համաձայնեալ կանոնադրութեան արամադրութեանց , յուսալով որ պահասնիւ պիտի լեցուէին հետզհետէ :

Բայց ամէն ինչ ցոյց կուտայ որ մեր այս անկախութիւնը ի գերեւ պիտի ելնէ : Վերջին իրողութիւնները եւ անցքերը , ուստի կառավարութեան հրամանները եւ օրէնքները , որոց նորերն սեղեկացանք , ահապէս վնաս մը կը պատճառեն , մեր եկեղեցւոյն եւ խիստ ծանրակշիւ վնաս մը կ'սպառնան անոր :

Այս սխալը եղելով իրենց իմացածնուս պէս , փոխադրեալ անցեալ տարւան օգոստոս 14 ին , այս մասին մեր կարծիքն յայտնել եւ աղաչել ձեռն Ս. Ստեփանն արքեպիսկոպոս պատգամել մեր եկեղեցւոյ իրաւունքները . արդ պարտք կը սեպենք այսօր ձեռն Ս. Աթուլին ոտքը թափել մեր ամենամանկեղծ իղծերը եւ մեր երախտագիտութիւնը այն ամենուն համար զոր ըրէք եւ գրեցէք ի նպատակ մեր եկեղեցւոյն եւ մեր կաթողիկոսութեան եւ անոնց իրաւանց ու սեփականութեանց համար : Բայց , աւա՛ղ , ձեր ջանքերը եւ ճիգերը նման մերին . ներքին դժբաղդ ճակատագրի մը վիճակեցան չունենալով ցարդ արդիւնք , ո եւ է նոր կարգադրութիւններ եւ հրամանադրեր սեղ վախ կազդեն աւելի ծանրակշիւ վնասներու : Երեւոյնք որ մինչեւ իսկ արդիւնքին ձեռն սրբազնութեան ընտրել եւ ձեռնադրել ամեն ձեռնարկի եկեղեցականներ , ինչպէս արդիւնքին ասկէ մեկնուած անոնց որոնք պատրաստուած էին եպիսկոպոս ձեռնադրել ի : Ի լրուան այս ամենուն , ներքին գործոց նախարարութեան պաշտօնական մէկ նամակը 27 օգոստոս 1903 թուականու որուն թարգմանութիւնը տեսանք , կրնացուէն 1886 ի կազմական կանոնադրի մօտ օրով վերաքննութիւնը կամ կրճատուած , ստանց կաթողիկոսարանից կանխաւ իմաց ստուել , աւանց այդ մասին ձեր կարծիքը ստանալու , հակառակ խնդրոյ առարկայ եղող կանոնադրին խմբագրութեան ասան եղածին եւ հակառակ այն պայմաններուն զորս պարտ էին յարգել :

Մանր եւ ցաւալի կասկած մը մեր սիրտը կը ճմլէ եւ անհանգստացուցիչ մտածումներ մեր միտքը կը պաշարեն : Մենք կը վախճանք թէ այն ամէնը

այն եղբակցութեան հասնի որ ուղղափառ հայ եկեղեցւոյ նկատմամբ կաթողիկոսարանից ընդհանրական բնոյթը ջնջուի : Կը վախճանք որ ընդհանրական կաթողիկոսարանից տիեզերական գործողութիւնը եւ իւր բոլոր հօտին հետ իր յարաբերութեանց ազատութիւնը արգիւտի , որ միայն Ռուսիոյ մէջ չը սահմանափակուի , այլ անոր մեծագոյն մասը կապի Օսմանեան կայսրութեան տակ , ճիշդաբարուած մինչեւ Պարսկաստան , Հնգկաստան եւ Ամերիկա ու Ովկիանիա :

Ովհետեւ եթէ չըլլայ այլեւս փոխադրած եւ ազատ յարաբերութիւն Հովուապետին եւ իր հօտին միջեւ , ընտանեակային տնկարկի կըլլայ կաթողիկոսական Սթոնին մեայ էջմիածնայ սրբաւայրը , եւ կաթողիկոսը թերեւս պարտաւորուի կրկին ձեռքը առնել իւր գաղթումի ցուպը ու փնտռել իրեն համար ապահով ապաստանարան մը եւ նպատակաւ պատսպարան մը :

Այս պատճառաւ մենք կը խնդրենք Ձեր Սրբութեանէն բարեհաճիլ մեզ յայտնել թէ այս տարածաշրջանի մէջ ո՞րն է ճշմարիտը եւ ո՞ր աստիճան հիմնաւոր են այս կասկածները : Վասն զի եթէ Դուք իսկապէս համոզուած էք թէ կաթողիկոսական Սթոնը անկարելի է որ իւր բնոյթը եւ յարաբերութիւնները պահէ , եթէ մեր եկեղեցւոյն ընտանեակային կազմակերպութիւնը վտանգի տակ է , եւ եթէ դայն կը ստիպեն հակառակ մեր հաճութեան եւ օտար ճնշումի մը տակ ընդունիլ այդ ծանր պայմանները , կը խնդրենք Ձեր Սրբութեանէն նկատողութեան առնել այս խնդիրը եւ ծանրակշիւ քննութիւն մը կատարել այդ լուրերու վաւերականութեան ու ապագայ հաւանականութեան եւ պարագայներու կարեւորութեան մասին , եւ բարեհաճիլ , յետ խորհրդակցութեան կաթողիկոսարանից եպիսկոպոսներուն հետ , մեզ տեղեկութիւն տալ եւ ցուցունել մեր հետեւելիք լաւագոյն ճամբան :

Մեր սուրբ եկեղեցւոյ երկնաւոր Հիմնադիրին ջերմագին աղօթքներ ուղղելով մեր ծայրագոյն Պատրիարքին խաղաղ , երջանիկ եւ երկար օրեր շնորհելու համար , եւ յարգաւոր համբարեւելով Ձեր սուրբ աջը

Մնամք Ձեր Սրբութեան խոնարհ զաւակները

- Արքեպ.
- » Մաղաքիա Պատր. Կ. Պոլսոյ
 - » Մեսրոպ Մոքիսեան
 - » Բարթողիմէոս
 - » Գրիգոր Յովնանէսեան
 - » Վահրամ

- Եպիսկ.
- » Տիմոթիոս Սոփրիւհեան
 - » Եղիշի Ապահունի
 - » Հմայեալ Դիմաքեան
 - » Մկրտիչ Վահագեան
 - » Գեորգ Երեցեան
 - » Ներսէս Արսլանեան
 - » Գարեթէլ Զէվարթեան

29 Յունւար 1904

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴ

—(Ե)—
Թուականէս իբր 3 տարի յառաջ քաղաքէս Կիպրոսի Ազգ. որբանոցը խըրկուած եւ մինչեւ ցարդ հոն խնամուող Մարաշեան Գալուստ եւ Յակոբ անոնք երկու որբերու ազգականներն կը հրաւիրուին ԴԱԶԳ. Խորհրդարան վերոյ յիշեալ որբերու մասին կարեւոր տեղեկութիւններ ստանալու համար :

Թաղական Խորհուրդ Ս. Սարգիս Եկեղեցւոյ Վանայի

ՀՈՒՆԱՆԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Բրո Արմէնիաի ստացած հետեւեալ հեռագիրը նոր մանրամասնութիւններ կուտայ Հունանի կոտորածի մասին :

ՏՓՂԻՍ , 22 Մարտ

Փետրուար 25 օրը առաւօտեան ժամը 4ին , զինուած իսլախու ժանը , ի ներկայութեան կանոնաւոր զօրաց յարձակեցաւ Հունանի վրայ : Հարիւր քսան տուներ կոշկոտեցան եւ հրդեհուեցան : Փոքրիկ աղջիկներ եւ կիներ , որոնց 15ին ծննդաբերութեան երկանց մէջ կը գըտնուէր բռնարաւուցան . խեղ մը փոքրիկ ժանկիկներ ալ ողջ թաղուեցան ձիւնին տակ կամ հորերու մէջ նետուեցան , նոյնպէս Հրանտ անունով օժերանի մը : Այրերը խողիւղուեցան անլուր վայրագութեամբ մը : Ձահերու թիւը գեւ չէ հասկցուած :

Մուշի Հայերը սարսափած են որովհետեւ Ալայպէյը 25րդէդներու եւ Քիւրտերու խուճրով անոնց թաղերուն մէջ տեղաւորուեցաւ : Մէհմէտ էֆէնտի ընկերակցութեամբ իր հետեւորդ զօրքով շրջան մը կընէ դաշտին մէջ եւ Քիւրտերու հետ նոր կոտորածի ծրագիրներ կը նիւթէ : Մեծ պահքի առաջին օրէն ի վեր հաղորդացութիւնք դադարած են գիւղերու եւ Մուշի միջեւ : Խալափախ յարձակած է Հայոց վերայ եւ անոնց չուկան աւարի տուած : Թուրք եւ Քիւրտ երեւելիները հեռագրաւ կայսերական արտօնութիւն ուղեցին ընդհանուր կոտորածի մը համար եւ կը սպառնան այդ ընել նոյն իսկառանց հրամանի :

Կ. ՊՈԼԻՍ , 12 Մարտ

Մուշի շրջանի Սասուն գաւառակի Հունան հայ գիւղը կործանած է : Քրիստոնեայ ժողովուրդը հուրով եւ սուրով ջնջուած : Խուլք եւ խրիան հաւաքուած քիւրտերը գաւառը սարսափի կը մատեն : Շատ գիւղերու վրայ յարձակեցան , որոց մին իշխան-Յարը , որ Սասունի մօտ Տալուրիկի թաղն է : Հայ ժողովուրդը յուսահատած է : Տալուրիկէն էր որ 1894ին սկսուեցաւ Հայոց կոտորածը ,

ՄԱՀՈՒԱՆ ԴԱՍԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՄԸ

Կ. ՊՈԼԻՍ , 23 Մարտ

Փետրուար 18 թուականու Վանէն ստացուած նամակի մը համեմատ Վարդգէս մականունեալ Յակոբ Ահարոնեան հայ ուսուցիչը մահուան դատապարտուած է եւ զանի կախելու համար միայն կըսպասուի որ Պոլսոյ վճռալինչ ատենը վճիռը հաստատէ : Վարդգէս 1899էն ի վեր կը գտնուէր Երկրին մէջ , ուր եկած էր պարսկական անցագրով մը : Թուրք ոստիկանութիւնը որ զանի իբր «գրգռիչ»

կը փնտռէր , մատնութեամբ մը անոր հետքը գտաւ ու զանի ձերբակալեց 1903 յունուար 12ի գիշերը :

Ոստիկանները ըստ օրինի պարսկական հիւպատոսարանի մէջ ներկայացուցիչը միասեղ չունենալով , Վարդգէս անոնց խստիւ ընդդիմադրեց եւ կուռին միջոցին ծանրապէս վիրաւորուեցաւ : Նախ իբր քաղաքական ոճրագործ 101 տարի բանտարկութեան դատապարտուեցաւ . բայց թուրք կառավարութիւնը որ ամեն կարելի միջոց կը փնտռէ Հայերը հաւաքելու համար , յետոյ ահա մարդասպանութեան ոճիր մը վերագրեց բանտի դատապարտութեան վրայ . ահա այս կերպով կարող եղաւ անոր դէմ մահուան վճիռ մը արձակել :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ձինուորական փոխադրութեանց մասնագէտ մը ուսու զօրաց Մ. Արեւիք փոխադրութեան մասին գրելով կըսէ . «Մոսկուա զօրքերու մեկեակաւ նկատելով , կը գտնենք մինչեւ իրարային 7500 քիլօմէթր հեռաւորութիւն . կայսրաններու միջեւ հեռաւորութիւնն է միջին հաշուով 45 քիլօմէթր , հեռեւագրաւ աշխարհի գրեթէ ամէն կողմը գործադրուող երկաթուղիի կանոններուն համեմատ , կառախուճեցը 2 1/2 ժամը անգամ մը միայն կրնան Մոսկուայէ ճամբայ ելնել , եւ նոյնչափ ժամանակ ալ ընելիք դադարները հաշուելով , կը հետեւի թէ կառախուճեցը միայն 4 1/2 ժամը անգամ մը կրնան իրարու ետեւէ երթալ եւ թէ օրը հինգ կառախուճեց աւելի չի կրնար ճամբայ ելնել : Եւ որովհետեւ 3500 հոգինոց զօրքաւանակի մը փոխադրութեան համար 110 կառախուճ պէտք է . այդ 110 կառախուճն ալ ճամբայ հանելու համար 22 օր (օրը հինգ կառախուճ) պէտք է դէպի Մ. Արեւիք » . (այսինքն 350,000 զօրք փոխադրելու համար 220 օր կամ 7 ամիս 10 օր պէտք է) :

Նոյն մասնագէտը ուրիշ դժուարութիւն մըն ալ ցոյց կուտայ որ շատ նշանակելի է . «Մոսկուայէ իրարային միակ երկաթուղիի գծով մը այդ զօրքերը փոխադրելէ զատ զանոնք կերակրել ալ պէտք է . հետեւաբար պաշարաւոր կառախուճներ ալ պէտքէ հետեւին զինուորական կառախուճներուն : Հաշիւ եղած է թէ երբ 300000 ուսու զինուոր համախմբուած ըլլայ Մանչուրիոյ մէջ . Սիպերիոյ երկաթուղին ալ հագել պիտի բաւէ պաշարի եւ ուղղամիջերքի փոխադրութեան » :

Հետեւաբար ցորչափ ծարրացիք ծովու մէջ իրենց ներկայ գերակշիւթիւնը պահեն եւ Ռուսները ծովային յարաբերութեանց այսպէս գործի մնան , Ռուսիան մինչեւ օգոստոս հազար պիտի կրնայ 300-350 հազար զօրք լեցնել Մ. Արեւիք իր միակ Սիպերիական երկաթուղիով , իսկ օգոստոսէ վերջ այդ երկաթուղին միայն այդ զինուորներուն բաւելու չափ պաշար կարող պիտի ըլլայ փոխադրել :

ՌՈՒՍ ՏՈՐՄԻՂԸ

Մ. Արեւիքի մէջ ծովային տեսակաւ ծարրացի ուսուցած գերակաւ թիւերը Ռուսիոյ համար մեծագոյն վտանգը նկատուած է Բեդերսպուրկի

ԱԶԳԱՅԻՆ

մէջ : Թղթակիցի մը ստանալ յաջողած կարգ մը վաւերական տեղեկութեանց նայելով , Ռուսիա որոշած է առէն ճիշդ թափել Մ . Արեւելքի մէջ ծովային գերակշռութիւնը ինք ստանալու համար : զի հակառակ պարագային , վերը բացառութեամբ պատճառներով , Ռուսիոյ համար բացարձակապէս անկարելի պիտի ըլլայ , (եթէ ծովային հաղորդակցութիւնը կարող չըլլայ վերահաստատել) , 30) 000 է աւելի զինուոր ունենալ պատերազմի թաւաճումը : Ինչ որ ձախողութիւնը ցամաքային ուժէն վար կը մնայ :

Ռուսիա ձախողութիւնը բռնելու եւ ծովին տիրապետելու նպատակաւ այսօր նաւային մեծ պատրաստութեան մէջ կը գտնուի եւ փութով կը շինէ 3 առաջնակարգ զբաւաւորներ : Զարը աւելածը Պալմիրի նաւաշինարանները կայացել ու նաւերը կը գնէ , ուրիշ թորութիւններ ալ նորոգելու շինուին : Վերջին անգամ գծուած նոր ծրագրին համաձայն , կըսէ թղթակիցը Պալմիրի սուսական տորմոզին էն զօրաւոր մարտանաւերը նոր շինուածներու հետ Մ . Արեւելք պիտի հասնին յառաջիկայ օգոստոսին , անոնց պիտի մրանան նաեւ կամաւոր տորմոզիներ 8 եւ ուրիշ փոխադրանքներ : հաւանականաբար Միջերկրականի տորմոզն ալ , որ ասկէ առաջ ձախող կը լիւծու վերադարձած էր , վախճալով թէ մի գոցէ ձախողութիւն տորմոզին բռնուի ու գերի տարուի : Այս ամէնը միացած երբ հասնին Մ . Արեւելք ձախողութիւնը նաւային ուժը կը գերազանցեն եւ հետեւաբար Ռուսները կը կարծեն թէ օգոստոսի վերջերը կարող պիտի ըլլան նոր հասնող մեծ տորմոզին շնորհիւ ձախողական մարտանաւերը փճացնել կամ գերել : Եթէ այս յայտը իրականանայ , այդ պարագային ծովային տիրապետութիւնը Ռուսներուն մնալով , ձախող յարաբերութիւնէ պիտի դադրի իր Գոթէն եւ Մանչուրիա հանած բանակներուն հետ , ասոնք Ռուսաց ցամաքային ուժերէն հալածուելով ծովը պիտի թափին կամ ջնջուին :

Էջմիածնայ Սինոդի վերականգնութեամբ կը յուսացուի որ , կըսէ «Ազատ Բեմ» Պետարապետի առաջնորդ Տ . Ներսէս արքեպ . ընդունի նախագահութիւնը Մայր Աթոռի Միաբանութեան : Ապրուստի եւ եկեղեցւոյ պայծառութեան խնդիրը առժամապէս կարողաւորուած է շնորհիւ բարեպաշտներու կողմէ վեհ . կաթողիկոսին զրկուած գումարներուն սրտէք ժամանակէ մը ի վեր կառավարութեանէն առանց վարդաւրդուելու իրեն կը յանձնուին : Իսկ յունիս 12 ի օրէնքին համաձայն գումարուած կառավարութեան հատոյթէն կառավարութեան յանձնել ուղած գումարները կը մերժուին հայ եկեղեցականաց կողմէն , որովհետեւ տղա դրամներու փոխարէն պահանջուած ձեւով ընկալադիր չէ կարելի տալ :

Արեւելք կաթողիկոսի նպատակ հանդիմանութիւն ընելու համար Ռուսները մէջ կալուած յանձնախումբը սահմանափակ շրջանակի մը մէջ իր յանձնառութիւնը զուլի հանած ըլլալով , գոյացած 361 Փր . ը զրկած է վստահելի անձնաւորութեան մը միջոցաւ ուղղակի Ակն : Նոյն յանձնախումբը ըստ իւր յայտարարութեան մեզ հաղորդած է նուիրատու 118 աղագայնոց ցանկը հրատարակելու խնդրանք . բայց տեղւոյ անցկութեան պատճառաւ շնորհ կընենք ատոր հրատարակութիւնը :

ՊԱՐՏԱՅԻՆՈՒԹԻՒՆԻ Ե Հնդկաստանի առաջնորդ Տ . Սահակ արքեպ . Այլատեսան այժմ Հնդկաստանի

մայրաքաղաքը Կալկաթա կը գտնուի , ուրիշ կը գրէ թէ ժամանակ մը եւս պիտի մնայ հոն : Տ . Սահակ արքեպիսկոպոսէ կը սպասուի որ իր այս պաշտօնական պտոյտին առթիւ Հնդկաստանի և Պիմանիոյ Հայերուն վրալ յատակ տեղեկութիւններ քաղէ և հրապարակաւ ծանօթացնէ Հնդկաստանի գաղթականութեան արդի վիճակը , որ ժամանակ մը մեծ և փառաւոր համարուելու վայելէր հարստութեան , վաճառականական և նոյն իսկ քաղաքական տեսակետներով : Այսօր կը կարծուի թէ առջի հարստութիւնը չէ մնացած Հնդկաստանի Հայերուն քով , որոնց երբեմն երբեմն լուծած կտակները ու մահուանէ յետոյ թողած միլիոններու լուրերը չափ չափերու աւիտորժակը սրած են :

Քանի մը տասնեակ տարիներէ ի վեր ոչ կաթողիկոսարանը եւ ոչ մեր Պատրիարքները Հնդկաստանի հայ գաղթականութեան վրայ որոշ տեղեկութիւններ չին ստացած , այնպէս որ այսօր մեր այդ հոգեւոր բարձրագոյն հաստատութիւնները գրեթէ բոլորովին անտեղեկ են Հնդկաստանի քանակի եւ սրակի մասին , մինչդեռ ուրիշ շատ մը վանքեր ու եկեղեցիներ իրենց , ծոցին մէջ կը պահեն ցարդ բաղմաթիւ թանկագին իրեղէններ , նուիրուած Հնդկաստանի հայ բարեպաշտներէ :

Հետաքրքրութեամբ կը սպասուի թէ Տ . Սահակ արքեպ . լոյս մը պիտի սփռէ այդ պատուական հայ գաղթականութեան արդի վիճակին և քանակի մասին : Կիւիկիոն թեմերէն հարիւրէ

աւելի աղգայիններ երուսաղէս ուխտի գացած են : Մինչեւ մարտ 4 հասնող հայ ուխտաւորներու ընդհանուր թիւը 600 անցերէ : Բեյութիւնի թղթակից մը Լիւնսիէի կը հաւատէ թէ մայր կայսրուհին անպաշտօն գտած է յունիս 12 ի օրէնքը : Վեհափառութիւնը լաւ միտք մը յղացած էր խնդրադիր մը զրկելու : Վեհափառութեան մայր կայսրուհին , խնդրելով անոր միջամտութիւնը ի նպաստ հայ եկեղեցիին :

— ԳՈՒԹԱՆԻ Խմբագիր Տ . Մեծատուրեան երկրագործական Արժանիքի ասպետ անուանուած եւ Բարիքի երկրագործական րնդհանուր Մրցումին մէջ մտաւ մը ընդունած է :

ԲԱՐԻՔԻ Հայոց Գործարծական ընկերութիւնը մարտ 19ին նուագահանգէս մը տուած է , որուն մասնակցած են ի մէջ օտար արուեստաւորներու Տ . Տիրան Ալէքսանեան և Տ . Կ . Պոյաճեան աղգայինները : Բարիքն ալ բուռն ծափահարութեան արժանացած են : Երեկոյթը ոգեւորեալ պարով մը վերջացուցած է :

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ

Ներոններու եւ ձէնկիդ խաներու լայնագոթիները գերազանցող «Մեծ Ոճրագործ» ին տխրահոյակ անունը եւ իր յըլալիք պատկերը կրող այս փառքի գերբը կուգուանկարէ այն անեւրեակային խոգոթութիւնները եւ ոճիւրները որոնք ամէն հայու սրտէ արիւնքամբով հանդերձ չեն դադրի հետաքրքրական ըլլալէ :

Դիւն է 50 ՍԱՆԴԻՄ

Դիւնի Կրավաճառ Տ . Ա . Զարպահանքի վաճառ :

ՍԱՐԴՈՒ ՍԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԻՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Առ Գիւմ Տիւն . . .

— Մի՛ դարմանար , սոմառ ատեն հովիւներու հետ ոչխարներ արածելու կերթայ ու միշտ ատանկ կընէ : Հիմակ ալ աչքին կերելին այդ տեսարաններն ու կը կարծէ թէ դաշտերուն մէջ կը գտնուի : Վերջապէս խնդիւ է . . . Ի՞նչ կը յուսաս իրմէն :
— Կաշիւի չէ՞ անգամ մը իրեն հետ տեսնուիլ :
— Ա՛ , վտանգաւոր . . . չըլլար :
Լոցի , բայց վճռից ամեն վտանգ աչքս առնել , Հետեւեալ օրը , վերջապէս ատեն , զիտեցի որ Զախարի թաղապետութեան մեծ դռնէն ներս կը մտնէ : Հետեւեցայ իրեն : Ան տիրոջն ուղղուելու ու իմ երեսն նայեցաւ :
— Ինձ օլտուն , Զախարի՛ , մըմիջեցի :
— Տօպօր վէճէ՛ր . . . չեղանց ան նայուածքը մը թնդնելով :
— Թուրքերէն գիտե՞ս , Զախարի՛ :
— Գիտեմ , ես :
— Անանկ է՞ նէ՛ կուգես ինծի հետ խօսիլ :
— Ե՛ս :
— Այո՛ :
— Ի՞նչ պիտի խօսինք :
— Նստի՛ր որ ըսեմ :
— Ի՞նչ նստեցայ , Ըսէ՛ նայիմ ի՞նչ է ուղածդ :

— Զախարի՛ , կը յիշե՞ս քու անցեալը :
— Կը յիշեմ . . . անոր պատմութիւնը կուգես :
— Հէ՛ :
— Վա՛յ . . . Ի՞նչ պիտի ընես , էրմէնի՛ . . . Ժպտեցաւ Զախարի այլանդակ ձեւով մը :
— Կուգեմ իմանալ :
— Անիկա գերեզմանին մէջ է . . . ես ի՞նչպէս դուրս հանեմ :
— Ո՞վ գերեզմանին մէջ է :
— Պատմութիւնս :
— Ի՞նչ կըսես , Զախարի՛ , պատմութիւնը գերեզմանին մէջ չըլլար . . .
— Ես . . .
— Ուղիղդ մէջ :
— Հա՛ , հա՛ , հա՛ . . . խնդաց Զախարի ու ձեռքս բռնեց : Իրա՛ւ որ թօաֆ ես , պէ՛ : Կըսես թէ պատմութիւնը գերեզմանին մէջ չըլլար , ուղիղին մէջ է :
— Անանկ չէ՞ մի՛ , ես :
— Անանկ թող ըլլայ . . . բայց . . .
— Ի՞նչ բայց . . .
— Պարապ բաներ կը հարցնես :
— Չէ՛ , չէ՛ , պարապ բաներ չեն . . . բռնէ՛ :
Զախարի պահ մը լռեց : Դուռի սեմին վրայ պուպուզեցաւ ու ձեռքը ձակարկն գնելով երկար ու խորունկ մտածումը մը մէջ թաղուեցաւ : Յետոյ աչքը վրաս յառեց ու ըսաւ :
« . . . Իմ պատմութիւնս սարսափելի է :
«Ճարտիներ առաջ կին մը ու զաւակներ ունէի , Ս . մեն մարդերու պէս՝ ես ալ քրտինքով կը ձարէի հացս ու կը պահէի ընտանիքս : Երջանիկ կը կարծէի ինքզինքս : Գինեմու չէի . . . »

«Օր մըն ալ տունս մտայ . . .
«Ընտանեկան յարկա պղծութեան մէջ էր :
«Մէջքէ՛ս դանակ մը հանեցի ու կինս մորթեցի . . .
անձա՛ր բոլորը :
«Նիկից ի վեր գերեզմանն է այն :
— Յետոյ՛ . . . հարցուցի ես :
— Կինս գերեզմանն էր , ես ալ բանտը , նկատել տուաւ Զախարի :
— Ի՛նչի՛ տարի բանտը մնացիր :
— Ձեմ գիտե՛ր , չեմ գիտե՛ր . . . հեռացի՛ր ասկից :
Հասկցայ թէ ներքին վրդովմունքը կ'ալիկոծուէր ու ինքը չէր կրնար զսպել զայն . հետեւաբար կը ճչէր , խնդրէր մը պէս շարժումներ կընէր ու կուգէր աչքէն հեռացունել այն ոճիւրը լզոր ձեռքովը գործած էր :
Զղջումի մը նշան էր այդ , եթէ ոչ վրէժխնդրութեան մը , — ասիկայ անձանոթ մնաց ինծի :
Ու Զախարի սկսաւ բացաբանել .
— Հի՛ւ , հի՛ւ , հի՛ւ . . . »

ԼԵՌԵՑ

ՎԵՐՁ



Տ Ը Դ Գ Ա Ք

ԻՐԱՆԻՆԻՔ ԸՆ ԴԻԱՌԻՐ—ՄԱՆՆԱՐԻՐԻ 2—3 հաֆթա իշխան պիր ԵՕԸԸԸԸԸ Իտեհեկիտեն, պու միւնտեթ զարֆընտա կաղէթա-

ՀԱՎԱՏԻԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սէրէզտէ պուկալար վէ թիւրք-լէր արաւընտա՝ սօն կիւնէրտէ պիր զավկա վուգու պուլմուշ, վէ պուկալարլարտան 3 թիւրքլէրտէն 14 քիշի Եարէլէնմիշ օլտըղը Բեօլմ. ծայրաչնկա պիւտիլիմիշ տիր. Պու հարէքէթին Եայըլմա-

—Պաղը Էվըրա տէօլլէթլէրի պէյնիտէն՝ Մըըը իշխան պիր իթի-լաֆհասը իթմէք խուսընտա միւզէքէրաթ ճէրէյաղ իթտիկի Սուլթանըն մէսմուի օլմուշ օլ-մաղլէ, Մըըը իւզէրինտէ քէնտի հուգուգը հիւքիւմիւնիսինէ (՝) նագիտէ կէթէրէպիլէճէք իթի-լաֆաթա գարըը բրթէսթ իթմէք իշխան Լօնտրա վէ Բարիս օս-մանըը Էլիլէրինէ թալիմաթ վէրմիշ վէ պու Եօլտա պիր ի-թիլաֆ հուսուլա կէլմէսի հայտէ Ալմանիա վէ Աստուրիա տէօլլէթլէ-րինէ իւպար Էթմէլէրինի վիէն-նա վէ Պէրլին Էլիլէրինէ Էմր Էյլէմիշ տիր.:

—Սլթանպօլ Բում Բաթրիգի թիւրքիւտաքի մէքրապօլիւլէրէ կոնգալտր Եօլլալապ, Յրթօ-տօքս քիլիսէլէրինտէ Բուսէն լիսանը իլէ Աւետարան օգուսա-սընը Եասագ իթմիշ տիր. Պիր գաշ սէնէտէն պէրու Բուցօ Վլահ-լար պաղը քիլիսէլէրտէ Բուսէն-ճէ օգուսագտա օլտըղլարընտան Բաթրիգին պու Էմրի տնէրէ ֆէնա թէէսիր իթմիշ օլտապ, Պապը Ալիէ բրթէսթ իթ-տիլէր. պու իսէ Բուսէն լի-սանը ըէսմէն քիլիսէ լիսանը թանըլըը օլտըղընը պէսթ իտէրէք, պու պուսուտա Բուցօ Վլահլար իլէ ուզլաշմալարընը Բում Բաթրիգին տօսթանէ սուրէթտէ թալիլէ իթտի.:

ՍԹԱՆՊՈԼ 16 մարտ—Պու կիւն իքի իսլահաթճը տէվլէթ Էլիլէ-րի մարտ 11 թա իլլէ նօթա իլէ պապը Ալիյէ ճէվապ վէրտի-լէր. Ժանտարմա զապիթլէրինին մըգտարը իշխան Էլիլէր քէնտի Էվլէլէք գարարլարը իւզէրինէ ըսրար խէյօրլար. Բէգա ժէնէ-րալ Տիօրճիսին տէվլէրլէրտէն նասպ օլընան մուսլիմլէրի իլէ

պէրապէր պիւլա թէէլիւր Մա-քէթոնիայա կիթմէսինի իտտաա իտէյօրլար. Տիօրճիստէն սօնրա 25 Էնէպիլ Ժանտարմա զապիթ-լէրի տալի տէր հալ Մաքէ-թոնիայա կիտէճէքլէր. պու զա-պիթլէրին գըգտարը 60 քիշիյէ պալիլ օլմաթը լապիտ վէ Էլլէմ կէօրիւմիշ տիր.:

Պու ճէվապնամէտէ Էլիլէրին իւսլէթէն պիւտիլարլէրի Դիւ-րէ, Ժանտարմա իսլահաթընա իլլէթիլա կէօրիւլալիլի գտտար Էնէպիլ միւլաղըմ զապիթլէր տալի ճէլլ օլընամագլար.:

Մ Ո Ւ Հ Ա Ր Ե Պ Ե

ԼՕՆՏՈՆ 17 մարտ

Զիֆուտան վէրիլտիկի թէ-լէկրաֆ իւզրէ, պիր Բուս հարապ սէֆինէսի Խաւի համ ճաբօն վա-բօրընը պաթըրմըը. Պու Եօլը վաբօրը օլտապ թալիլէր ճաբօն-ը ֆագաթ Եօլըլար Զիլի ի-միշլէր.:

ԹՈՒՐԻՍ 17 մարտ

Մարտ 15 տէ վուգու պուլան միւսատէմէտէն տօլալըն աթիտէ-քի ըէսմի իլան նէշը օլընմըը տըր.:

«Էօյլէնտէն Էվլէլ պիր ալալ ճաբօն սիւվարիսի» Զուէնիլ—չու շէհրինի զապթ իտէն 600 բուս աքէրինէ թէսաթիլ իթտի. ճաբօնըլար Բուսլարը կէրի սիւ-րէրէք, շէհրի զապթ իթմէկէ մաւաֆագ օլտուլար. Պու միւ-սատէմէտէ ճաբօնըլարտան պիր զապիթ վէ 4 աքէր Էօլիւ վէ 2 զապիթ վէ 10 նէֆէր Եարէլի տիւշտիլէր. Բուսլարտան տա-լի օ՝ գտտար թէլէֆիլաթ վար տըր.:

ԲԵԳԵՐՍՊՈՒՐԿ 17 մարտ—Բուս թէլէկրաֆ աճէնթիլին Մուք-տէնտէն ալտըղը մալիւմաթ իւզրէ. 10000 ճաբօնըլար Բօ-րէանըն շիմալի ճիւնթիլինտէ պու-լընան Զիլնուք նէհրինտէն կէշիլլէր տիր.:

ԲԵԳԵՐՍՊՈՒՐԿ 17 մարտ.—Ժէ-նարալ Գուրօքաթիլինին թէլէ-կրաֆը իւզրէ, Զուէնիլ—չու Էհալիսինին պէյանընա պինաէն, մարտ 15 տէքի միւսատէմէտէ ճաբօնըլարտան 40 տան զիյատէ Էօլիւ վէ 100 քիշի գտտար Եա-րէլի տիւշմիշ վէ պուլար Ան-չույա նագլ օլընմըը տըր. Մէգ-քիւր միւսատէմէտէ մէճրուհ օլան Եիւզ պաշը Սթէֆանով վէ-ֆաթ իթտի.:

—Անչու ճիւվարընտա Բուսլար պիր թապուր ճաբօնըլար իլէ վուգուչուպ կէրի շէքիլմիշլէր, ճաբօնըլարտան 50 աքէր վէ բուսլարտան 100 գաղապ տիւշմիշ-լէր.:

—Բօրթ Արթուրտա վէ Վլա-տիլօսթսրտա Բուսլարըն 150 շէ-պիր թօնօ քէօլիւլի պուլընմաղ-

լէ, 5 ալ քէֆայէթ իտէճէք իմիշ-ինկիլթէրանըն ճաբօնա 10 առէտ թօրթիլ վաբօրը սաթմըը օլմաթընը բուս կաղէթալարը մուսլէպէ իտէյօրլար.:

—Բուսլար նու-Զուսնիլ շէհ-րինտէ (Բօրթ Արթուր Եօլու իւ-զէրինտէ) իտարէի աքէրիլի իլանի Էթմիշլէր. իշպու շէ-հիր. Զիլնէ ալիտ օլտըղըն-տան, գօնսօլուար բրթէսթ ի-թէճէքլէր. Պու սէպէպլէ Ինկիլ-թէլա վէ 5. Ամբիկա տէվլէթ-լէրի իլէ Բուսլա պէյնիտէ աղըր մէսէլէ ալըլաճար զանի օլընըյօր պիրա մէգքիւր շէհրտէքի Ամ-րիկա գօնսօլուսանէսինին պան-ալրասընը բուսլար աշաղը ալմը-լար. Լօնտրա կաղէթալարը պու պապուէ պէօլիւք վէլլէլէ գալտը-րըյօրլար.:

Մ Ի Ի Թ Ե Ն Է Վ Լ Ի Թ Ե

ԼՕՆՏՈՆ 17 մարտ — Թիպէթին Պարի Եօնիլ շէհրինտէն Տէյիլ Մէյլի վէրիլէն թէլէկրաֆա պինաէն, ժէնէրալ Մաքտօնալտ բաղար Էրթէսի կիւնիւ՝ քէնտի մայէ-թիլինտէ պուլընան 1000 աքէրի վէ 6 թօրու իլէ Եօլա չըղմըը. Թուսա վէ Եանցի շէհրիլէրի ա-րաւընտա թիպէթիլէր թարա-ֆընտան պու ինկիլիլէր իւզէ-րինէ հիւճու՝ օլընամագ զանի իտիլիյօր.:

ՊԷՐԼԻՆ 17 մարտ — Բէթէրս-պուրկտան իշար օլընտըղը իւզ-րէ, Եահաւի թիւճարանտան վէ կաղէթաճըլարտան միւթէշէքիլ պիր հէյէթի մէպուսէ Բուս տա-լիլիյէ նաղըրը Մ. Բլէվէտէն գապուլ օլընմուշ վէ պու միւնա-սիպէթլէ նաղըր վատիթմիշ քի-Եահաւիլէրին հալինիլ իսլահ-նա թէտրիճլէ (Եալաշ Եալաշ) չալըլաճագ, ֆագաթ չու մուհա-րէպէ Էսնասընտա Եահաւիլէ-րին թուլտըղը թարիգտէն տօլալը թէշէքի պէյան իթմիշ վէ պուստան պէօլլէ անլէրին հիւսնի հարէքէթտէ պուլընմա-լարը խուսուսընտա մէգքիւր հէյէթէ թէնպիլաթտա պուլըն մըը տըր.:

—ԲԱՐԻՉՈՒՆ Կաղէթաճըլարըն Բուս Եարէլիլէր իշխան թէ-ճէմիւ իթտիլէրի իանէ շիմտի-յէ գտտար 4, 750, 000 ֆր. ա (?) պալիլ օլտըղը Տրէնկիլ Եաղիյօր.:

—ԲՈՄԲԱՆ Պ. Թալէպարա Եաղըլտըղընա պինաէն, ժէնէ-րալ Բիլիթի Կարապալտինին ըէյասթիլ ալթընտա պիր գօ-միթէ թէշէքիլ օլընմըը տըր. իշ-պու գօմիթէ Արնալուտարըն համէքէթինէ մուսլէնէթ իտէ-ճէք վէ իթալիտաա պուլընան Արնալուտարտա թէշէքիլաթ թէ-սիլ Էյլէյէճէք իմիշ.:

—ԵՈՒՄՈՒՐՃԱՄ Էլլէթի պիւ-թիւն Հինտիտաա Եայըլմագտա օլտըղը վէ սօն հաֆթա զարֆըն-տա 40,827 քիշի օ միւտհիլ խաս-թալըղտան վէֆաթ իթտիլի

Պօմպատան պա թէլէկրաֆ պիւ-տիրիլիյօր.:

—ԻՅԻԱԿԻԱՆ Բօթէնտա վի-լայէթինտէ շիտտէթլի զէլլէլէ վուգու պուլտըղը սէպէպլէ, Է-հալիտէն չօլը շէհրի թէրք իթ-միշ վէ բէք չօգ խանէլէր Եը-զըլմըը տըրլար.:

—ՊԷՐԼԻՆՏԵՆ մարտ 17 թա-րիլլէ պիւտիլլալիլի իւզրէ, Լօքալ Անճայկիւր կաղէթանըն Եաղըղընա պինաէն, Ալմանիա վէ իթալիա հիւքիւմալարընըն գօն միւսագաթը Էսնասընտա, պուլար Պալգան իշլէրինէ ալիտ պիր չօգ մէսէլէլէր հաղ-գընտա պէյնիլէրինտէ իթիլաֆ հասըլ իթմիշլէր. վէ պու իթի-լաֆը Վիէննա հիւքիւմէթինէ իշար Էյլէմիշլէր.:

Թ Ի Ի Զ Ա Ր Ի Թ Ե

ՎԱՌՆԱ, 20 մարտ

Table with 2 columns: Item Name, Price/Value. Includes entries like ՊՈՒՂՏԱՅ, Վալիս, Արապա, ԱՐԱՎ, Վալիս 100 քիւ, Արապա 42-45 լիպ, ԵՈՒԼԱՅ արապա 33/36 լիպ, Վալիս 100 քիւ, ՖԱՍՈՒԼԵԱ, Արապա 100 քիւ, ՏԱՐԸ արապա 57/59 5,80 6,00, ԲՈԼՈՁ արապա 9-8/10, ՄԻՍԻՐ Վալիս 7.5-7.10, ՉԱՎՏԱՐ արապա 6.60-7.20, Կիւնտէ 30-40 Վալիս վէ 80-100, Նարդէն 20, 65 ֆրանք, Օսմ. լիւրտը 22, 90 ալթուն ֆրանք, ՊԱՊԱԼԻԹԵ, Վարնա քիւստընտա պագալիլ, մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթու ֆրանք իլէ, ԿԱՂՎԵ 1,85/2,30, ՇԷՎԷՐ Նէմցէ 60, ՇԷՎԷՐ (քէսմէ) սանաղդ 31,80, ԲԻՐԻՆՃ Ֆիլիպէ չուվալը 39,—, » Ճաբն » 38, » Ինկիլիլ » 26.50, » Բիդոն » 54 ֆր., ԿԱՁ սանաղդը 10.40, ԵԻՅԹԻՆ Եաղը քիւ 80—90, ԵՈՒՄՈՒՐՃԱՄ 100 առէտ 4,20—60, ԳՈՒՐՈՒ Էլզիւմ 26

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԱՎՈՒՏԵԱՆ ՎԷ ԷՎԼԱՏԼՍՐ ՏՕՊՐԻՉ

Իլք պահար մէվսիթի իշխան մանի-ֆաթուրա վէ կալանթարիւ մաղաղա-լարըղընա նէֆիս մալլէր, իրէքիլ վէ Եարաղը ֆիւտսիլըլար վէ սալիլ Է-նի չէշտիլ Եթիլմիշ օլմաղլէ, հէօր-մէթիլ միւլթիլիլէր Էզհէր ճիւնթ մէմ-նուն իտէպիլէճէկիմիլի իլան իտուպ, բըրօլա իշխան պիր տէֆա մաղաղալա-րըղընա միւրաճագ լիթէլէր ըէճա օլընտըր.: